# Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՒ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (ՓԱՍՏԱԹՂԹԱՅԻՆ ԿՈԴ՝ Պ-115-23.04.2019-ՏՀ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

| | Առաջարկության, (փոփոխության, լրացման) հեղինակը | Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը | Առաջարկությունը (փոփոխությունը, լրացումը) | Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը | Առաջարկությունն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ Հանձնաժողովի որոշումը |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 1 | ԱԺ պատգամավոր Արտակ Մանուկյան | Նախագծի 1-ին հոդված | Նախագծի 1-ին հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ.<br><br>Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2016 թվականի հոկտեմբերի 4-ի հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 64-րդ հոդվածի 2-րդ մասի 47-րդ կետը լրացնել նոր «ժգ.» ենթակետով.<br><br>«ժգ. հաճախորդներից արժեթղթերով գործարքների կատարման հանձնարարականների ընդունումը եւ հաղորդումը, արժեթղթերով գործարքների բրոքերային եւ այլ միջնորդական ծառայությունների մատուցումը, կարգավորվող շուկայի կանոններին համապատասխան շուկա ստեղծողի կարգավիճակով արժեթղթերի երկկողմանի գնանշման ապահովման ծառայությունների մատուցումը:»: | Ընդունվել է | Ընդունվել է |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 2 | Աժ պատգամավոր Արտակ Մանուկյան | Նախագծի 3-րդ հոդված | Նախագծի 3-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ.<br><br>Հոդված 3. Օրենսգրքի 149-րդ հոդվածի՝<br><br>1) 1-ին մասում լրացնել նոր 4-րդ կետ.<br><br>«4) կարգավորվող շուկայում առեւտրին թույլատրված բաժնետոմսերից, պարտատոմսերից կամ ներդրում վկայող այլ արժեթղթերից ստացվող եկամուտը:»:<br><br>2) 2-րդ մասի 4-րդ կետն ուժը կորցրած ճանաչել: | Ընդունվել է | Ընդունվել է |
| 3 | Աժ պատգամավոր Արտակ Մանուկյան | Նախագծի 4-րդ հոդված | Նախագծի 4-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ.<br><br>Հոդված 4. Օրենսգրքի 150-րդ հոդվածի 8-րդ մասում «հինգ տոկոս դրույքաչափով» բառերից հետո լրացնել «՝ հաշվի առնելով Օրենսգրքի 149-րդ հոդվածով սահմանված նվազեցումները» բառերը: | Ընդունվել է | Ընդունվել է |
| 4 | Աժ պատգամավոր Արտակ Մանուկյան | Նախագծում ավելացնել նոր 5-րդ հոդված | Նախագծի նոր 5-րդ հոդվածը շարադրել հետևյալ բովանդակությամբ.<br><br>Հոդված 5. Սույն օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածների դրույթները տարածվում են այն արժեթղթերի (արժեթղթերի դասերի) վրա, որոնք կարգավորվող շուկայում առևտրին թույլատրվել են ոչ ուշ, քան 2025 թվականի հունվարի 1-ը: | Ընդունվել է | Ընդունվել է |
| 5 | Աժ պատգամավոր Արտակ Մանուկյան | Նախագծում ավելացնել նոր 6-րդ հոդված | Նախագծի նոր 6-րդ հոդվածը շարադրել հետևյալ բովանդակությամբ.<br><br>«Հոդված 6. Օրենքն ուժի մեջ է մտնում 2020 թվականի հունվարի 1-ից:» | Ընդունվել է | Ընդունվել է |